կամ նրանց գլուխները, վորոնք կրկնվում են Պոռշյանների քանդակների և մանրանկարչական պատկերագրության մեջ։ Շղթայված առյուծներ ունինք Պոռշ իշխանի վիմափոր յեկեղեցիներից մեկի պատի վերա Գեղարդում կամ Գլաձորի դպրոցի, վոր ինչպես կտեսնենք, նույն տոհմի հաստատություն եր, Թորոս Տարոնեցու մի սկզբնազարդի մեջ (պատկ. 26. և 27) *, իսկ մյուսները տեսանք վերև (եջ. 45 46. 47. պատկ. 12. 13. 15)։



Բարձրաքանդակ առյուծներ Գեղարդում. **Պատկեր 23.**

Պոռշ շատ խառնակ ժամանակ անցավ իշխանության գլուխը. Խորազմների շահ քաջ Ջալալեդդինը նեղված լինելով թաթարներից յուր ընիկ յերկրում, անցավ դեպի արևմուտք և 1222 թվին հաստատվեց Ատրպատականում, իսկ 1224/5 թվին եկ անցավ Հայաստան. Հայ և Վրացի միացյալ զորքերը Իվանե աթաբեկի առաջնորդությամբ հանդիպեցին նորան Կոտայքում՝ Գառնի ավանի մոտերքը. բայց չարաչար պարտություն կրեցին իրենց անփութության շնորհիվ. Իվանեն ստիպված եր տասը մարդով փախչել Բեղվաբերդը։ Ջալալեդդինը շարունակելով յուր արշավանքը՝ նվաճեց Տփխիսը, Գանձակը, Նախիջևանը և ապա հարձակվեց Խլաթի և Հոռոմոց (Փոքր-Ասիայի) սուլթանությունների վերա. այստեղ հաղիվ Խլաթի, Հոռոմոց և Յեգիպտոսի սուլթանների միացյալ ուժերով, վորոնց մասնակից եյին Կիլիկիայի Հայեր և իշխաններ, կարողացան կոտրել նորա թափը. Ջալալեդդինն ստիպված եր հետ դառնալ Մուղանի դաշտը՝ ձմերելու. բայց թաթարներն այնտեղից եկ փախցրին նորան դեպի Ամիթ, ուր և գտավ նա յուր վախճանը 1231 թվին։ Մենք չենք տալիս Ջալալեդդինի արշավանքի մանրամասնությունները, մեր նյութից դուրս համարելով, բավական և հիշել, վոր այս արշավանքներն ու նոցա հետ կապված արհավիրքները յոթ տարի տևեցին (1224—1231) ըստ Որբելյանի, իրոք մի քիչ եկ ավելի *։

* Զեռ. Էջմ. № 182/206. 463ա։

* Գանձակեցին մեր պատմիչների մեջ ամենից ավելի մանրամասն և խոսում այս արշավանքների մասին, բայց առանց նշանակելու թվականը (221—217). մի հիշատակարան (Նշխարք մատենագրության Հայոց. Բ. Պատկանեան. Սպ. 1884. յեր. 69) տալիս և ճիշդ թվականը. «Արդ ի յայսմ ՈՁ (=1231) ամի էլաւ ազգ մի. որ կոչի Թաթար և փախստական արար զՊարսկաց թագաւորն ...»։ Ջալալեդդինն այստեղ Պարսկաց թագավոր և կոչված, վորովհետև յուր ընիկ յերկրից հալածվելուց հետո՝ իրոք նվաճել եր նա Պարսկաստանն ու Ատրպատականը և մի նոր պետություն հիմնել։ А. Мюллер (История Ислама. Т. III. Ст. 244) Ջալալեդդինի մահը նշանակում է 16 ոգոստ. 1231 թ։